ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ «ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻ 12.05.2006Թ. ԹԻՎ 9/3-Լ ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ՝ Պալատ)** խորհուրդը, մասնակցությամբ Պալատի խորհրդի նախագահ՝ Արա Զոհրաբյանի, խորհրդի անդամներ՝ Հրանտ Անանյանի, Մելանյա Առուստամյանի, Սեդրակ Ասատրյանի, Սիմոն Բաբայանի, Տիգրան Խուրշուդյանի, Նելլի Հարությունյանի և Կարեն Մեժլումյանի,

քննության առնելով Պալատի խորհրդի հանրային պաշտպանի գրասենյակի կանոնակարգը հաստատելու և Պալատի խորհրդի «Հանրային պաշտպանի գրասենյակի կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 12.05.2006թ. թիվ 9/3-Լ որոշումն ուժը կորցրած ճանաչելու հարցը,

ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 15-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 14-րդ, 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 3-րդ և 5-րդ մասի և 37-րդ հոդվածի 1-ին մասի, ինչպես նաև Պալատի կանոնադրության 16.5 կետի 18-րդ ենթակետի, 21.5 կետի պահանջներով,

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Հաստատել հանրային պաշտպանի գրասենյակի կանոնակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի «Հանրային պաշտպանի գրասենյակի կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 12.05.2006թ. թիվ 9/3-Լ որոշումը:

3. Սահմանել, որ սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հուլիսի 16-ից:

04 հուլիսի 2018թ.
թիվ 13/15-Լ

4. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարին, ինչպես նաև ապահովել կանոնակարգի հրապարակումը Պալատի կայքէջում:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
խորհրդի նախագահ՝ Արա Զոհրաբյան

04 հուլիսի 2018թ.
թիվ 13/15-Լ
ք. Երևան